

ԿԱՐՕՏ ՀԱՅ ԼԵԶՈՒԻՆ

Այս գիշեր երապիս մէջ հայերէն խօսեցայ:

Նստեր էի պատուհանիս առջեւ: Պարտէպին պատին վրայ սեւ կատու մը եղունգները կը սրէր ջղայնութեամբ: Յանկարծ ճանկը վարկաւ թուղթի կտորի մը, որ գալարուեր էր չորացած փերեւի մը նման: Կատուն մօտեցուց միւս ճանկն ալ եւ բացաւ թղթիկը: Աչքերս հայերէն գիրերու հանդիպեցան: Շուտ մը պարտեպ իջայ, թղթիկը ապարեցի կատուին ճանկէն, բացի եւ կարդացի:

Պզտիկ ապդ մըն էր, օրաթերթէ մը փրցուած: Հայ որբ փղեկ մը կը փնտռէր իր մայրը: Թուղթին միւս էջին վրայ կար նաեւ հայ նպարավաճառի մը ապդը, որ նոյնպէս կարդացի ամբողջութեամբ: Յետոյ գիրերը քննեցի եւ անգամ մըն ալ կարդացի:

Ու նեղուեցայ կատուին:

- Ինչո՞ւ կը բզկտես այս թղթիկը,- ըսի հայերէն:

Կատուն պատասխանեց ինծի՝ նոյնպէս հայերէն:

-Որովհետեւ մուկի պէս պզտիկ էր եւ աղմուկ կը հանէր:

- Հայ փղեկ մը գրած է վայն,- ըսի հայերէն:

- Ինչո՞ւ հոս ինկած է,- հարցուց:

- Մենք հիմա ինկած ենք ամէն կողմ:

Յետոյ անոր նկարագրեցի մեր պատմութիւնը, մեր արուեստը, մեր պատերազմները, մեր յառաջապահ յեղափոխականներուն կացութիւնը:

Կատուն փոխանակ հիանալու, պատասխանեց.

- Երկար պատմութիւն:

- Այո՛, երկար է: Ասիպուած ենք երկար խօսիլ, որովհետեւ անարդարութիւն պիտի ըլլար, եթէ չսկսինք աշխարհի սրբեղծումէն, այսինքն այն օրէն, երբ սրբեղծուած է մեր ժողովուրդն ալ:

- Խօսքը ժամանակի կորուստ է, առարկեց կատուն աչքերը բացխփելով: - Եթէ կ'ուզէք յաջողիլ, մեզի պէս ըրէք. երբեք չխօսիլ: Եւ երբեք չխղճալ մուկերուն:

Ես մտիկ չարի կատուին, բայց շատ գոհ էի, որովհետեւ հայերէն կը խօսէի եւ հայերէն կը լսէի: Արթնացայ ուրախ սրտով:

Ուրախ էի, որովհետեւ հայերէն խօսեր էի, հոգ չէ, թէ կենդանիի մը հետ:

.....

Այս առաւօտ, սակայն, աւելի քան երբեք կարօտն ունիմ հայերէն խօսելու: Կ'ուզեմ հայերէն խօսիլ բաց աչքով: Հայ մը, հայ մարդ մը կը փնտռեմ հետը խօսելու համար: Ո՛վ որ կը հասկնայ նոր ու փարօրինակ այս զգացումը, այս փառապեցնող զգացումը – կարծրը լեզուին – թող օգնէ ինծի: Կ'ուզեմ, որ հայ գաղթական մը, հոգ չէ թէ լեզուս մոռացած ըլլայ, բայց գիտնայ միայն մէկ բառ, իյնայ ճամբուս վրայ, եւ ես կարենամ ըսել.

- Հա՞յ ես:

Անիկա գլխով «այո՛» ըսէր ինծի: Ու ես անմիջապէս, հօրս սորվեցուցած լեզուով ըսէի.

- Բարի լոյս...

Տիեզերք վկայ, ասկէ աւելի քաղցր եւ ասկէ աւելի փխուր բան չկայ: Այդ բառին մէջ մեր ժողովուրդը ինչէր գրած է:

Ո՛վ իմ ըղձալի հայերէնս, առաւօտեան պէս թարմ եւ գիշերուան պէս խորունկ,
մանուկի մը պէս զուարթուն եւ տարեցի մը պէս իմաստուն, աղօթքի մը պէս
սփոփարար եւ գարնան պէս գեղեցիկ...

Ո՛վ իմ անոյշ հայերէնս, գիւղացիի ու քաղաքացիի լեզու, բանուորին ու
թագաւորին բերանին յարմար, երիտասարդ եւ հուժկու, ապրած մնաս դուն:

ՇԱԻԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ